ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Ք. Աբովյան « 30 » հոկտեմբերի 2016 թ.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքը, այսուհետ՝ «ՎԱՐՉԱՏՈՒ», ի դեմս համայնքի ղեկավար Վ. Գևորգյանի, որը գործում է համաձայն կանոնադրության մի կողմից, և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, այսուհետ՝ «ՎԱՐՉԱԿԱԼ», ի դեմս ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի լիազորված անձ Հ. Հակոբյանի, որը գործում է համաձայն կանոնադրության մյուս կողմից կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Հաշվի առնելով, որ 2016 թվականի հունվարի 1-ից վերականգնվել է Աբովյանի համայնքապետարանի վարչական շենքի ջեռուցումը 2020 ք.մ. մակերեսում, անհրաժեշտ է 26. 02. 2015թ. Անշարժ գույքի մասի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) մտցնել փոփոխություններ և լրացումներ:

2. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությանը հանձնված Աբովյանի համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկում գտնվող 186.1 ք.մ. մակերեսով տարածքի օգտագործման և տիրապետման համար տարեկան սահմանված 696 000 ՀՀ դրամ վարձավճարը փոփոխել և ավելացնել վերը նշված մակերեսով տարածքի տարեկան ջեռուցման ծախսը, որը կազմում է տարեկան 461 000 ՀՀ դրամ, ընդհանուր տարեկան վարձավճարը կկազմի 1 157 000 ՀՀ դրամ:

3. Սույն համաձայնագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից:

ՎԱՐՉԱՏՈՒ
Աբովյանի համայնքապետարանի
համայնքի
ղեկավար
Վ. Գևորգյան

ՎԱՐՉԱԿԱԼ
ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության
գլխավոր հարկադիր կատարողի
լիազ. անձ Հ. Հակոբյան